

**ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԵՎՈՒԹՅԱՆ ԿՈՒՐՑՈՒՄ**

Բանալի բառեր՝ Իրան, Թուրքիա, արտաքին քաղաքականություն, կրոնական գործոն, Արցախյան պատերազմ, Նախիջևան

Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը (ՆԻՀ), սահմանակից լինելով Թուրքիային և Հայաստանին, չունենալով ընդհանուր սահման ադրբեջանական հանրապետության հետ, Իրանի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունի թե՛ կրոնաքաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ անվտանգության տեսանկյունից: Թուրքիայի ռազմական ներկայությունը Նախիջևանում, թուրք-նախիջևանյան սահմանին քրդերի գործողություններով պայմանավորված Նախիջևանի և Թուրքիայի միջև կապն ընդհատվելու հավանականությունը, Նախիջևանի ուղղությամբ Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերի՝ դիրքային առավելության հասնելուն ուղղված գործողությունները՝ դրանք արտաքին այն հիմնական գործոններն են, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում Իրանի ռազմաքաղաքական դեկավարության՝ Նախիջևանի հարցում որոշումների կայացման վրա:

ԻՍՀԱՄ-ի փլուզումից հետո Ադրբեջանում Ա. Էլչիբեյի գլխավորությամբ ձևավորված իշխանության հակաիրանական քաղաքականությամբ², ինչպես նաև Արցախյան պատերազմով պայմանավորված Նախիջևանի վրա ազդեցությունը մեծացնելու Իրանի Իսլամական Հանրապետության հնարավորությունները խիստ սահմանափակվել էին³:

Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականության մշակման գործում կարևոր ազդեցություն ունի Թուրքիայի գործոնը. մասնավորապես Թեհրանի ուշադրության կենտրոնում է գտնվում Նախիջևանում Թուրքիայի տնտեսական և ռազմական ներկայությունը, ինչպես նաև թուրք-նախիջևանյան սահմանի հարակից շրջաններում

¹ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, p.գ.թ., էլ. փոստ՝ armen.israyelyan@ysu.am

² 141 حسین احمدی، جمهوری آذربایجان، 22 سال تکلیف برای دولت و ملت سازی، تهران 2015، ص. 141
Հ., Ադրբեջանական Հանրապետության՝ ազգ և պետություն ստեղծելու 22-ամյա ջանքերը, Թեհրան 2015, էջ 141).

³ هادی عظمی؛ پارامترهای سیاسی امنیتی موثر بر افزایش وابستگی جمهوری آذربایجان به ایران؛ با تاکید بر منطقه خردمختار نخجوان، فصلنامه پژوهش های راهبردی، تهران 1396، شماره 32، ص. 108
Հ., Իրանից Ադրբեջանի Հանրապետության կախվածության մեծացման վրա ազդող քաղաքական-անվտանգային պարամետրերը. Նախիջևանի օրինակով, «Ռազմավարական հետազոտություններ» գիտական հոդվածների ժողովածու, Թեհրան, 2017, Հ. 32, էջ. 108).

քրդերի մասնակցությամբ հնարավոր զարգացումները: Թեև Իրանը Նախիջևանում Թուրքիայի ռազմական ներկայությունը դիտում է որպես Անկարայի և Բաքվի միջև հետխորհրդային շրջանում ձևավորված համագործակցության դրսևորում⁴, բայց և այնպես Թուրքիայի և Ադրբեջանի՝ Նախիջևանը ռազմականացնելու վերջին տարիներին նկատվող միտումներն անհանգստացնում են Թեհրանին⁵ հատկապես եթե այդ գործողությունները զուգորդվում են հարակից շրջաններում ընթացող զարգացումներով, որոնք կարող են բացասաբար ազդել Իրանի շուրջ ձևավորված անվտանգության միջավայրի վրա⁶: Սահմանային անվտանգության նկատմամբ Իրանը բավական զգայուն է. Ինչպես Թուրքիայում, այնպես էլ թուրք-նախիջևանյան սահմանում տեղի ունեցող ցանկացած զարգացմանն Իրանի ռազմաքաղաքական դեկավարությունն անմիջապես արձագանքում է՝ փորձելով չեզոքացնել հնարավոր սպառնալիքները⁷:

Տնտեսական մրցակցության տեսանկյունից վերջին երկու տասնամյակի ընթացքում Նախիջևանում Թուրքիան բավական լավ արդյունքներ է արձանագրել: Արդյունավետ տնտեսական քաղաքականությամբ Թուրքիային հաջողվել է Նախիջևանում Իրանի ազդեցությունը հասցնել նվազագույնի. կառուցվել են Իզդիր-Մադարակ 82 կմ մայրուղին, գործարկվել են Նախիջևան-Իզդիր-Կարս երկաթգիծն ու Նախիջևան-Ստամբուլ ավիաչվերթը⁸: Իհարկե, բացի օբյեկտիվ գործոններից՝ (*իրանական ոչ մրցունակ սպրանքներ, պատժամիջոցներ, բարձր մաքսատուրքեր և այլն*) Նախիջևանի հարցում ԱՀ նկատմամբ Իրանի կոշտ քաղաքականությամբ էր նաև պայմանավորված Իրանի նկատմամբ Թուրքիայի արձանագրած տնտեսական հաջողությունը:

Իրանի համար մեծ կարևորություն ունեն թուրք-նախիջևանյան սահմանում քրդերի ակտիվությունը: Քրդական հարցը՝ որպես ընդհանուր սպառնալիք, մշտապես առանձնաիատուկ տեղ է ունեցել Իրանի և Թուրքիայի հարաբերություններում: Դեռ մեկ դար առաջ էր, որ

⁴ Elik S., Iran-Turkey Relations, 1979-2011 (Durham Middle East and Islamic World Series), New York, 2012, pp. 108-111.

⁵ Военные учения в Нахичевани: кто у Азербайджана и Турции общий враг? <https://regnum.ru/news/polit/2641998.html>

⁶ دیدار و ایستہ نظامی ایران در باکو با مقامات نظامی نخجوان <http://www.iribnews.ir/fa/news/2071709/> (Բաքվում Իրանի ռազմական կցորդի հանդիպումը Նախիջևանի ռազմական դեկավարության հետ):

⁷ ناگفته‌هایی از آمادگی نظامی ایران در شب کودتای ترکیه <https://www.tasnimnews.com/fa/news/1395/08/15/1231418/> (Բացահայտում՝ Թուրքիայի հեղաշրջման զիշերն Իրանի զինված ուժերը բարձր պատրաստվածության քերելու վերաբերյալ):

⁸ آذربایجان و خروج آهسته نخجوان از وابستگی به ایران <https://bit.ly/2qHSDhP> (Ադրբեջանը և Իրանի կախվածությունից Նախիջևանի հանդարտ դուրս գալը):

Ռեզա շահի կառավարման շրջանում Փոքր Մասիսը և քրդաբնակ հարակից տարածքներն անցան Թուրքիայի վերահսկողության ներքո, և արդյունքում՝ Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապն ավելի ամրապնդվեց⁹: Ի դեպ, իրանական պատմագիտությունն այդ գործարքն Իրանի թույլ տված ռազմավարական սխալ է համարում¹⁰: Քրդական գործոնով պայմանավորված թուրք-իրանական համագործակցությունը շարունակվեց նաև Իսլամական հեղափոխությունից հետո, երբ կողմերը տարբեր իրավիճակներում քրդական հարցի շուրջ մերթ համագործակցում են, մերթ մրցակցում, մերթ միմյանց մեղադրում քրդական այս կամ խմբավորմանն աջակցելու մեջ¹¹:

Արդի փուլում Իրանն ուշադրությամբ հետևում է թուրք-նախիջևանյան սահմանի՝ Թուրքիան Նախիջևանին կապող «քրդական միջանցքի», շուրջ ընթացող զարգացումներին: Իրանի փորձագիտական շրջանակները որպես հեռանկարային զարգացում դիտարկում են այն սցենարը, ըստ որի՝ քրդերի ազդեցության մեծացման պարագայում հնարավոր է այնպիսի իրադրություն ստեղծվի, երբ Թուրքիայի և Նախիջևանի միջև ցամաքային կապը կարող է կտրվել, արդյունքում տարածաշրջանում ուժերի հարաբերակցությունը կփոխվի հոգուտ Իրանի¹²:

Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականության մեջ կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի գործոնը: Եթե Թուրքիան Նախիջևանի հետ կապվում է «քրդական միջանցքով», ապա տեսականորեն՝ Թուրքիայի և Ադրբեջանի ուղիղ կապը հնարավոր է ապահովել «Չանգեզուրի միջանցքի» միջոցով: Այդ տեսանկյունից Իրանի համար կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Նախիջևանի նկատմամբ Հայաստանի ունեցած դիրքային առավելությունն Իրանին թույլ է տալիս հայկական գործոնն օգտագործելով անհրաժեշտ պահի ճնշում գործադրել Ադրբեջանի վրա՝

⁹ Փափազյան Հ., Ինչպես գոյացավ Թուրքիա-Նախիջևան տասը կիլոմետրանոց սահմանը, Իրան-Նամե, Երևան, 2000, Հ. 35, էջ 6:

¹⁰ مهدی فرجی، بررسی مسائل ارضی ایران و ترکیه در دوره رضاشاه، گنجینه اسناد بهار، تهران، 1391، شماره 85، ص. 37 (Ֆարաջի Մ., Ռեզա շահի կառավարման շրջանում Իրանի և Թուրքիայի տարածքային խնդիրների ուսումնասիրությունը, «Փաստաթղթերի ժողովածու», Թեհրան, 2011, Հ. 85, էջ 37):

¹¹ Stüv` Olson R., Turkey-Iran Relations, 1979-2004: Revolution, Ideology, War, Coups, and Geopolitics, 2004, pp. 51-55.

¹² قیچی کردها بر آراءات کوچک و قطع ارتباط ترکیه با نخجوان <https://bit.ly/2OfB416> (Քրդերի մկրատը Փոքր Արարատի փեշերին. Թուրքիայի՝ Նախիջևանի հետ ունեցած կապի կտրվելը).

բացառելով Թուրքիայի և աղբրեջանական հանրապետության միջև ուղիղ ցամաքային կապը¹³:

Իրանը Նախիջևանի, Հայաստանի, Արցախի և Աղբրեջանի հետ սահմանների նկատմամբ չափազանց զգայուն է: Հարավային Կովկասի նկատմամբ ԻԻՀ վարած քաղաքականության նպատակն է, հաշվի առնելով Արցախյան պատերազմի ընթացքում ի հայտ եկած սպառնալիքները, թույլ չտալ այդ տարածաշրջաններից որևէ մեկում ծագած լարվածության ազդեցությունը հյուսիսային նահանգների վրա, քանի որ այստեղ իրավիճակի սրման դեպքում ԻԻՀ հյուսիսային սահմաններում Արցախից հետո երկրորդ լարված օջախի առաջացումն Իրանի պետական շահերի տեսանկյունից կարող է հանգեցնել վտանգավոր գործընթացների:

Մինևույն ժամանակ Նախիջևանի ուղղությամբ Հայաստանի դիրքերի թուլացումն իր հերթին կնվազեցնի Նախիջևանի կախվածությունն Աղբրեջանից: Հետևաբար Նախիջևանի սահմանին արձանագրվող ցանկացած լարվածության դեպքում Իրանը ռիսկերի գնահատում է իրականացնում: Թե՛ Արցախյան պատերազմի տարիներին¹⁴, թե՛ ապրիլյան պատերազմի¹⁵, թե՛ 2018 թ. Նախիջևան-Հայաստան սահմանին տեղի ունեցած դիրքային փոփոխությունների ընթացքում¹⁶ հյուսիսային սահմաններում արձանագրված զարգացումները գտնվում էին Իրանի ռազմաքաղաքական դեկավարության վերահսկողության ներքո:

Եթե Թուրքիայի և Հայաստանի գործոնները կարևոր նշանակություն են ստանում Իրանի տարածաշրջանային քաղաքականության մեջ Նախիջևանի դերակատարության որոշարկման գործում, ապա Աղբրեջանի դեպքում Նախիջևանի հարցն ազդեցիկ գործիք է Բաքվի նկատմամբ Թեհրանի որդեգրած հեռահար քաղաքականության իրականացման գործում: Աղբրեջանի գործոնով պայմանավորված

¹³ محسن سلطانی، وابستگی ژئوپلیتیکی جمهوری خودمختار نخجوان به ایران، پژوهش های راهبردی سیاست، تهران، 68 شماره 16، ص. 68 (Սոլթանի Մ., Նախիջևանի Ինքնավար Հանրապետության աշխարհաքաղաքական կախվածությունը Իրանից, «Ուսումնական հետազոտություններ» գիտական հոդվածների ժողովածու, Թեհրան, 2015, Հ. 16, էջ. 68):
¹⁴ 108-103، ص. 1372، انتشارات پروین، بحران قریباغ، کوه بیات، (Բայաթ Բ., Ղարաբաղի ճգնաժամը, Թեհրան, 1993, էջ 103-108):
¹⁵ در مناقشه قره باغ پاسداران انقلاب اسلامی کنار رود ارس مستقر شده بودند

<http://www.anaj.ir/trtNews/43587/AF/theme/trt/?id=43587> (Ղարաբաղյան հակամարտության ժամանակ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը տեղակայվել էր Արաքսի ափին):

¹⁶ امنیت حاکم بر مرزهای ایران و جمهوری آذربایجان به نفع هر دو کشور است
<https://www.irna.ir/news/82864372/> (Իրանի և Նախիջևանի սահմանին անվտանգության հաստատումը բխում է երկու երկրների շահերից):

Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականությունն առանձնանում է հետևյալ ուղղություններով՝

- Նախիջևանի հարցով Ադրբեջանի վրա ճնշում գործադրելու քաղաքականության վերանայում,
- Բաքվի վերահսկողությունից դուրս Նախիջևանի և Իրանի միջև քաղաքական հարաբերությունների ընդլայնում,
- Նախիջևանում Իրանի կրոնական ազդեցությունը մեծացնելու նպատակով փափուկ ուժի քաղաքականության իրականացում,
- ՆԻՀ-ԻԻՀ հարաբերությունները Բաքվի և Թեհրանի հարաբերություններում առաջացող լարվածության բացասական ազդեցությունից հեռու պահելու ձգտում,
- Նախիջևանցիների սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված մանրաձախ առևտրի և բուժման նպատակով Իրան այցելող նախիջևանցիների համար ազատ տեղաշարժի ապահովում:

Ադրբեջանի՝ Իրանի պատմությունն աղավաղելու, իրանական մշակութային արժեքները յուրացնելու, Իրանի թյուրքախոս բնակչության խնդիրները շահարկելու գործողություններով¹⁷, ինչպես նաև շիա հոգևոր գործիչների նկատմամբ բռնաճշումներով պայմանավորված¹⁸ Իրանը հատկապես Մահմուդ Ահմադինեժադի նախագահության շրջանում (2005-2013 թթ.) Բաքվի վրա ճնշում գործադրելու որպես ազդեցիկ գործիք էր օգտագործում նաև Նախիջևանի հարցը՝ սպառնալով փակել սահմանը և հումանիտար աղետի ենթարկել Նախիջևանի բնակչությանը¹⁹: Թեհրանի այդ քաղաքականությունը ոչ միայն Նախիջևանի բնակչության շրջանում Իրանի նկատմամբ բացասական տրամադրություններ առաջացրեց, այլև բարենպաստ պայմաններ ստեղծեց Թուրքիայի համար՝ մեծացնելու իր ազդեցությունը ՆԻՀ-ում: Իրավիճակը փոխելու նպատակով վերջին տարիներին տեղեկատվական քաղաքականության շնորհիվ Իրանին հաջողվել է Նախիջևանի հետ հարաբերությունները գերծ պահել Բաքվի հետ ունեցած խնդիրների բացասական ազդեցությունից:

Նախիջևանցիների՝ որպես Իրանի նկատմամբ մինչ այդ ունեցած բացասական վերաբերմունքի փոփոխություն կարելի է համարել

¹⁷ Տե՛ս՝ Իսրայելյան Ա., «Թյուրքականության գործոնը Իրանի և Ադրբեջանի հարաբերություններում», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2018, 31, էջ 149-159:

¹⁸ Տե՛ս, Իսրայելյան Ա., «Իրանի կրոնական քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 2016, Հ. 30, էջ 199-215:

¹⁹ «دعوى ايران، تركيه و جمهوری آذربایجان بر سر لغو ویزا» <https://bit.ly/2M9Ftb3> (Վիզայի չեղարկման շուրջ Ադրբեջանի, Թուրքիայի և Իրանի վեճը)։

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության՝ ԻԻՀ քաղաքացիների համար վիզային ռեժիմի չեղարկման մասին որոշումը²⁰: Սա այն դեպքում, երբ շուրջ մեկ տասնամյակ է, ինչ Ադրբեջանն ամեն կերպ հրաժարվում է Իրանի քաղաքացիների համար չեղյալ հայտարարել վիզային ռեժիմը՝ մտավախություն ունենալով կրոնական ազդեցության մեծացումից: Բացի այդ՝ հաճախակի իրականացվող բարձր մակարդակի փոխայցերի²¹ և պարբերաբար քաղաքական²² և կրոնական²³ շրջանակների հետ հանդիպումների շնորհիվ Իրանը նշանակալի հաջողության է հասել Նախիջևանի հետ կապը Բաքվի վերահսկողությունից դուրս պահելու գործում:

Հասան Առհանիի նախագահության շրջանում Իրանը վերանայեց իր տարածաշրջանային քաղաքականությունը՝ հայտարարելով բոլոր հարևանների, այդ թվում Ադրբեջանի հետ հարաբերությունները կարգավորելու և արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչն ուժեղացնելու նպատակադրության վերաբերյալ²⁴: Նախիջևանցիներին Իրանի Արևելյան Ատրպատական նահանգի բնակչությանն ինտրեգրելու և փոխադարձ ակտիվ շփումների արդյունքում Նախիջևանում Իրանի տնտեսական ազդեցության մեծացման միջոցով նաև կրոնական ազդեցությունը մեծացնելու նպատակով վերջին տարիներին Իրանի նախաձեռնությամբ մի շարք խոշորամասշտաբ նախագծեր են իրականացվել. մասնավորապես ԻԻՀ Արևելյան Ատրպատական նահանգում գործող «Արաս» ազատ տնտեսական գոտում բարենպաստ պայմաններ են ստեղծվել, արդիականացվել են Նախիջևանի սահմանին գտնվող ենթակառուցվածքները, Ադրբեջանը Նախիջևանին կապող ավտոմայրուղին²⁵: Բացի այդ՝ Իրանը պատրաստականություն է հայտնել մասնակցելու Բաքու-Նախիջևան ուղևորատար գնացքի

²⁰ لغو ویزای ورود به نخجوان برای اتباع ایران <https://www.mehrnews.com/news/4782266/> (Իրանի քաղաքացիների համար Նախիջևան մուտքի արտոնագրային ռեժիմը չեղյալ է հայտարարվել):

²¹ دیدار رئیس مجلس عالی جمهوری خودمختار نخجوان با ظریف <https://www.isna.ir/news/96092614416/> (Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Բարձրագույն Մեջլիսի նախագահի հանդիպումը Չարիֆի հետ):

²² مقام نخجوانی: نخجوان کمک های ایران را فراموش نخواهد کرد <https://www.irna.ir/news/83545199/> (Նախիջևանցի պաշտոնյա. Նախիջևանն Իրանի օգնությունը երբեք չի մոռանա):

²³ همکاری های ایران و نخجوان در امور دینی بررسی شد <https://www.irna.ir/news/83598644/> (Կրոնական ոլորտում Իրանի և Նախիջևանի համագործակցությանն առնչվող հարցեր են քննարկվել):

²⁴ Akbarzadeh, Shahram, Iran in the World President Rouhani's Foreign Policy, 2016, pp. 67-69.

²⁵ Տե՛ս՝ Իրանի «Արաս» ազատ տնտեսական գոտու հնարավորությունները, <https://bit.ly/36ntTKr>

կառուցմանը, որի շուրջ համաձայնությունը ձեռք էր բերվել ԻԻՀ նախագահ Հ. Ռոհանիի՝ 2018 թ. ապրիլին Բաքու կատարած այցի ընթացքում²⁶:

Իրանը կրոնական քաղաքականության հեռահար նպատակներն իրագործելու նպատակով դեռ 2000-ական թվականներից սկսած ակտիվ բանակցում է Նախիջևան-Մաշհադ երկաթգիծը գործարկելու շուրջ: 2016 թ. արդեն առաջին ուղևորները փոխադրվեցին կրոնական Մաշհադ քաղաք²⁷, որտեղ տարեկան միլիոնավոր շիաներ են այցելում ուխտագնացության: Նախիջևանի նկատմամբ Իրանի կրոնական քաղաքականության հաջողված նախագծերից կարելի է համարել նաև Նախիջևան քաղաքի կենտրոնում ԻԻՀ հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի հովանու ներքո Փաթեմե Չահրա մզկիթի կառուցումը, որի պաշտոնական բացումը տեղի էր ունեցել 1999 թ.²⁸:

Ուսումնասիրելով Նախիջևանի նկատմամբ Իրանի վարած քաղաքականությունը, դրա վրա ազդող արտաքին գործոնները, ինչպես նաև վերլուծելով երկկողմ հարաբերություններում տեղի ունեցած զարգացումները՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին՝

- Նախիջևանի նկատմամբ Իրանի քաղաքականության ռազմավարությունն ուղղված է երկարաժամկետ հեռանկարում Նախիջևանում Թուրքիայի տնտեսական ներկայության սահմանափակմանը, Նախիջևանի՝ Իրանից կախվածության մեծացմանը (բայց ոչ թե ճնշման, այլ համագործակցության միջոցով) Նախիջևանի և Արևելյան Աստրախանի նահանգի միջև մշակույթի, կրոնի և տնտեսության ոլորտներում լայն ինտեգրմանը:

- Իրանը նախիջևանցիների շրջանում դրական կերպար ձևավորելու նպատակով վերջին տարիներին վերանայել է իր քաղաքականությունը: Հատկապես տեղեկավական դաշտում Թեհրանը հիշեցնում է Արցախյան պատերազմի ընթացքում Նախիջևանին ցուցաբերած Իրանի աջակցությունը՝ ընդգծելով դժվար իրավիճակներում Նախիջևանին կրկին օգնելու պատրաստականությունը:

- Հաշվի առնելով Անկարայի ազդեցության օրեցօր մեծացումը Նախիջևանում, Հայաստանի և Ադրբեջանի միջև պատերազմի վերսկսման հավանականությունը, Իրանի նկատմամբ տարատեսակ

²⁶ راه اندازی قطار نخجوان – باکو از مسیر خاک ایران <http://www.iribnews.ir/fa/news/2092753/>

(Բաքու-Նախիջևան երկաթգծի գործարկումը՝ Իրանի տարածքով).

²⁷ Kayhan newspaper, 09 Aug 2018, No: 21974, p. 3.

²⁸ 66 قلی زاده علیاری یادداشت‌های سفر نخجوان، فرهنگ کوثر، تهران، 2000، شماره 41، ص. 66 (Ալիյարի Ղ., Գրառումներ՝ Նախիջևանյան ացի վերաբերյալ, «Քոուսար» գիտական հոդվածների ժողովածու, Թեհրան, 2000, Հ. 41. Էջ 66).

գործոններով պայմանավորված Ադրբեջանի քաղաքականության վերափոփոխման հնարավորությունը՝ Նախիջևանն Իրանի համար շարունակում է մնալ այն կարևոր լծակը, որը Թեհրանին հնարավորություն է տալիս մի կողմից Նախիջևանի հետ լայն ինտեգրման արդյունքում մեծացնել իրանական ազդեցությունը, մյուս կողմից անհրաժեշտության դեպքում ճնշում գործադրել Բաքվի վրա՝ խիստ անհրաժեշտության դեպքում օգտագործելով «Նախիջևանը հումանիտար աղետի ենթարկելու» սպառնալիքը, Բաքվին ստիպելով փոխել Իրանի շահերին հակասող որևէ մոտեցում:

ОСОБЕННОСТЬ ИРАНСКОЙ ПОЛИТИКИ В НАХИЧЕВАНЕ *Армен Израелян* **(Резюме)**

Военное присутствие Турции в Нахичеване, вероятность разрыва связей между Нахичеваном и Турцией из-за курдских действий на турецко-нахичеванской границе, а также действия вооруженных сил Армении и Азербайджана по завоеванию позиции в Нахичевани являются основными внешними факторами, которые оказывают существенное влияние на принятие решений относительно Нахичевана военным и политическим руководством Ирана.

В случае с Азербайджаном нахичеванская проблема является мощным инструментом, с помощью которого Тегеран получает возможность проводить свою далеко идущую политику в отношении Баку. Политика Ирана в отношении Нахичевана, обусловленная фактором Азербайджана отличается следующими направлениями:

- Рассмотрение политики давления на Азербайджан в вопросе Нахичевана,
- Расширение политических отношений между Нахичеваном и Ираном вне контроля Баку,
- Реализация политики мягкой силы для усиления религиозного влияния Ирана в Нахичеване,
- Стремление держать отношения Нахичевана и Ирана от негативных последствий напряженности, возникших в отношениях Баку и Тегерана,
- Обеспечение свободного перемещения нахичеванцев приехавших в Иран для розничной торговли и лечения в связи с социально-экономическим положением.

Политика Ирана в отношении Нахичевана направлена на ограничение экономического присутствия Турции в Нахичеване в долгосрочной

перспективе, усиление зависимости Нахичевана от Ирана (но не посредством принуждения, а сотрудничества) и широкой интеграции культурных, экономических, религиозных границ между Нахичеваном и областью Восточный Атрпатакан, а также обеспечение свободного движения граждан приграничных регионов.

IRANIAN POLICY ON NAKHICHEVAN

Armen Israyelyan

(Summary)

Nakhichevan from a religious, economic and security perspective has always been an important foreign policy objective for Iran. Due to Nakhichevan's border with Turkey and Armenia and the lack of common border with Azerbaijan has allowed Iranian policy makers to take advantage over its isolation and develop a geo-strategy to influence the exclave. Ultimately, Iran strives to maintain its position of power and influence in the region. Moreover, Turkey's military presence and expansion into Nakhichevan has prompted Iran to counteract its longtime adversary. With the added possibility of Kurdish autonomy in Turkey separating it from Nakhichevan in the future, Iran is working hard to bolster its influence in the landlocked nation. Equally important is the goal of sustaining Armenia's positional advantage on the frontline over Nakhichevan to neutralize Turkish military power. These all contribute to the external factors of how Iran devises their overall foreign policy strategy towards its neighboring exclave.

This article will take in consideration the following points from an Iranian foreign policy perspective toward it objectives in Nakhichevan.

- Iran's policy of containment towards Nakhichevan.
- The development of political relations between Iran and Nakhichevan without Azerbaijan.
- Iran's religious influence on Nakhichevan and its implementation of soft power on the exclave.
- Conducting a policy that will ease tensions between Baku and Tehran, and not affect the developing relations between Iran and Nakhichevan,
- Ensuring the free movement for Nakhichevani's visiting Iran for trade and health service.

In general, the goal of Iran's policy towards Nakhichevan is counter balancing Turkey's presence in the exclave, aiming to increase Nakhichevan's dependence on Iran not only through pressure but also through cooperation and the integration of the land pocket into the East Azerbaijan province of Iran through cultural, economic and religious means.